ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

0009 ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00 37410) 511-771

N ԴԴ-1-Ե-9461

«29» դեկտեմբերի 2023թ.

«Դելտա սեքյուրիթի» ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Նարեգ Սահակյանին
(հասցե՝ ք. Երևան, Վարդանանց փ. 18/2)

Հարգելի պարոն Սահակյան,

Դատական դեպարտամենտի (այսուհետ՝ Գնորդ) և «Դելտա սեքյուրիթի» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) 12.07.2023թ. կնքված «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ» N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19-5» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ» վերտառությամբ հավելված 1-ով նախատեսված ապրանքը չի մատակարարվել, որի արդյունքում Վաճառողը չի կատարել Պայմանագրի 2.4.1 և 2.4.2 կետերով սահմանված իր պարտավորությունները և խախտել է նշված ապրանքի մատակարարման համար սահմանված վերջնաժամկետը, այն է՝ մինչև սույն թվականի դեկտեմբերի 25-ը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով Պայմանագրի 2.1.7 և 2.1.5 կետերը՝ տեղեկացվում է, որ Պայմանագիրը միակողմանի լուծվում է, և կկիրառվի Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

Միաժամանակ տեղեկացվում է, որ սույն ծանուցումը ստանալուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 11 760.00 (տասնմեկ հազար յոթ հարյուր վաթսուն դրամ) ՀՀ դրամ, որպես տույժ:

Հարգանքով՝

ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատ.՝ Նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչություն,
Հեռ.՝ /+37410/ 511 777